

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆ.

Վեցամսեայ 6 ֆ.

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Երկու քիւրմիկ ծառով

Տարեկան 14 ֆ.

Վեցամսեայ 7 ֆ.

ԱՄԵՐԻԿԱ


Տարեկան 2.60 ֆար

Վեցամսեայ 1.50 ֆ.

Ս. Ա. Ն. Ե. Ի. Կ.

Իրա՛նցման տարի

20 տակիրմ



Rédaction du journal

«Iravounk»

VALENA (L. 2r a

Редация

на ВѢСТНИКЪ

«Иравунк»

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ

բռնիր

ԿԸ ՀՐԱՏՈՒՐԱՆՈՒՆ ԱՄԵՆ ԶՈՐԵՐԸ ԹԻՒ ԻՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏՕՔԹ. Ն. ՍՕԹԻՐՕՑ


Վերադարձ-Մանկաբան

Վառնա Մ.-Հռիզա փողոց թիւ 8

(Զինուորական Բիւլայի մօտ)

Հիւանդ կընդունի ժամը 2—4

ՈՒՂԻՆ ՃԵՂԵՆՔ



Երկու տասնեակ ամիսներ ալ սահեցան հայ տառապանքին վերայն օրեր, ամիսներ ու տարիներ կը հոլովուին, բայց մեր կեանքի դառնութիւնը չամոքի, որովհետեւ յուր ձեռնարկ մը ազդովին ճիգ մը ընելէ հեռու ենք:

Քաղաքական բարդութիւնները դժբաղդ պատահարներու դառն դասերը և Մայր երկիրը օրէ օր դատարկող պետական էնթրիքները մեր վրայ անխուսաբելի անյետաձգելի պարտք կը դնեն մեր ուղեղային բոլոր ուժերը ի մի համախմբած ելք մը, ճար մը խորհելու մեր ազգային գոյութիւնը ապահովելու համար: Պէտք է խոստովանիլ թէ արտասահմանեան հայ գաղութներու գոյութեան պտտանման համար թափուած ամեն ջանք ու զոհողութիւն, ինչ աստիճանի որ ալ ըլլան, կրնան միայն որոշ ժամանակի մը համար պահպանել մեր գոյութիւնը օտար երկիրքի տակ: Իսկ այնչափ ատեն որ հասնինք Մայր հայրենիքէն ծագելիք յուսոյ արեւը ուղղուելու: Առանց այդ յոյսին իրականացմանը իզուր են արտասահմանեան հայ գաղութներու գոյութեան պահպանումին համար թափուած ջանքերը: Ուստի մեր բուն իտէալը, արտասահմանեան հայ կեանքի բուն նպատակը պէտք է ձգտի գլխաւորապէս դէպի մայր հայրենիքի յոյսին իրականացումը:

Դառն փորձեր և քաղաքական հորիվէնին վրայ կուտակուած բարդութիւններ տիրականօրէն մեզ կը հրամայեն լոկ սրտի ըզգացմանց անձնատուր չըլլալ այլ միայն կարելիին ձգտիլ ու լրջութեամբ և շրջահայեցութեամբ

գործել: Այո՛, ամեն հայու բազմալի է Արտաշէսի, Տիգրանի կամ Տրդատի գահը բարձրացած և հայութիւնը փառաւորուած տեսնել Արարատի ստորոտը, Բայց այս օրուան համար այդ լոկ սրտի բազմանք է, և դառն իրականութեան առջև միայն անորոշ երազ մը:

Պէտք է ըմբռնենք թէ այլևս երազներով օրօրուելու ժամանակ չէ մնացած մեզ: Մեզ չեն ձգեր որ այդ երազներով պառկած մըրափենք: Մեզ կը հարկադրեն կա՛մ ժամանակի պահանջքին համաձայն ելլել ընթանալ և կա՛մ կոխտուել: Մի՛հ կը կոխտեն արդէն, եթէ քիչ մըն ալ չելլենք, չսթափուինք ու չը ճշդենք այն ուղին ուրիշ պէտք է ընթանանք պղծովին:

Մեզ կը պնդեն, յեղափոխական ուղին է այն ուրիշ պէտք է առաջ քաշենք: Բայց մենք կը պատասխանենք թէ՛ յեղափոխական ուղին ամուր գետնի վրայ յարգարուած երկաթեայ ցղերը պէտք չէ կարծել, ուրիշ կառախումբը անսպլթաք կը յառաջանայ ճիշտ իր նպատակակետը: Ամէն երկաթեայ ցող նոյն նպատակակետը չը տանիր: Նոյնպէս ամեն յեղափոխական ուղի դէպի հայկական ազատութիւն չ'առաջնորդեր: Մենք մեր նպատակակետին հասնելու համար մեր յեղափոխական կազմակերպութիւններու ցարդ զատ զատ ճշդել կարծած ուղիները տեսանք թէ անել էին և աղէտաբեր: Այսօր իրենք ալ կը խոստովանին թէ սխալներ են գործեր: Բայց սխալը խոստովանիլը բաւական չէ: պէտք է չափէ աւելի լրջութիւն և շրջահայեցութիւն: Եթէ ոչ սխալին ալ վերջը չը գար աղէտին ալ, իսկ հայութիւնը նորանոր աղէտներու երկար շարքի մը տոկալու միջոցներէն զուրկ է այլևս:



ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ
ԳՈՐԾԱԳՈՒԼԸ

Սօֆիա հրատարակուող և կառավարութեան ու պալատին կիսապաշտօնական օրկանը համարուող Գոռնիկ տը Սօֆիա կիսաշաբաթաթերթի այս յոդուածը մանաւանդ անոր ընկերակցութեան տեսակետը, թարգմանաբար կը ներկայացնենք մեր ընթերցողներու ուշադրութեան:

Մեր ընթերցողները, աւելի հեռուն, այս սրենակներուն մէջ պիտի գտնեն համառօտ տեղեկութիւն մը միջադէպերուն, որոնց առիթ տուաւ Պետական երկաթուղիներու պաշտօններուն և գործաւորներուն անցեալ չորեքշաբթի օր յանկարծ հրատարակած գործադուլը: Այս շարժումը, զոր կարելի է խոսկաբարկան անուանել, զի խնդրը կը դառնայ Պետութեան մը և ծառայութեան մը շուրջը, որ սերտ առնչութիւն ունի երկրին նոյնիսկ գոյութեան հետ, վերջին աստիճան ցաւալի է: Անոնք որ այս տեսակ անարդարանալի ցոյց մը րեկու հապճեպ որոշումը տուին, ասով իսկ կապացուցանին իրենց կատարեալ աղիտութիւնը կեանքի կեանքի ու աշխատութեան պայմաններուն այսպիսի նորակազմ իշխանապետութեան մը մէջ, ինչպէս է Պուլկարիան, Գործադուլ ընողները կը պահանջեն, ինչպէս ամեն գործադուլներու մէջ, ամսական կամ օրավարձի յաւելում մը և աշխատութեան նուազում, թէեւ անոնք առանձնաշնորհեալ վիճակ մը ունին, քաղաքամար սովորական պաշտօններուն և գործաւորներուն:

Յաջ ամեն անկողնակալ դիտողներու, եթէ կայ գծաւարին կացութիւն մը Պուլկարիոյ մէջ, ուր ճարտարաւորուեստը դեռ օրօրոցին մէջ է իրականացւալ գործատէրերու կացութիւնն է այդ և ոչ թէ գործաւորներունը:

Գործատէրերը, իրօք չեն կրնար իրենց ձեռնարկութեանց ծախսերուն դիմանալ, բայց եթէ փոխառութիւններ ընելով, հետեւաբար պարտաւոր են նախ իրենց շահերէն հանել ունեցած պարտքերնուն բաւական ծանր տոկոսները, և ապա մնացածով գործաւորներուն օրականը վճարել արտադրած գործը շահաբեր ըլլալ թէ ոչ կամ աւելի կամ նուազ լաւ գործուած: Պէտք էր հետեւաբար, որ գործաւորները ու գործատէրը համբերատար գտնուէին և ջանքի գործը ընէին համեմատեալ ճարտարաւորուեստը աւելի հաստատուն հիմքու վրայ հաս-

տատելու, քան թէ սնամէջ վարդապետութեան մը յափշտակուած յախառն կերպով անձնատուր ըլլալին ընկերակցութեան մը, որ իր տեղը պէտք չէ ունենայ դեռ Պուլկարիոյ մէջ:

Արեւմտեան երկիրներու մէջ ուր ճարտարաւորուեստը բարգաւաճ վիճակի մէջ է դատելի ի վեր, Երաժաշտութիւնը անպիսի գործութիւն մը դարձած է, որով կը մեկնումի և որ յառաջ բերած է, ընդգիծութեան օրէնքով, գործաւորներու միութիւնը՝ զրամի ամենակարողութեան դիմագրելու համար: Երկաթուղիներու գործադուլը կազմակերպողները կրնային առանց կատակաբանելու հաստատել որ նոյն պայմանները գոյութիւն ունին նաեւ իշխանապետութեան մէջ: Ուրեմն այս գործադուլին մէջ ուրիշ բան չենք տեսներ, եթէ ոչ փափաք մը կապկարար նմանելու ընկերակցական գործեակերպին աւելի հին և աւելի հարուստ Պետութիւններու, ուր ընկերակցութեան հարցը շահաբերական է ամէն տեսակէտով, հասեմատ այն Պայմաններուն, որոնց մէջ ան երեւան կուգայ և արոնք չ'կան Պուլկարիոյ մէջ:

Մեծ փորձառութեան մը պէտք չկայ կանխատեսելու թէ գործադուլական շարժումը որուն վրայ է խօսքերնս, իբր հետեւանք պիտի բերէ բարոյական ու նիւթական վնաս մը այն գծաւոր պաշտօններուն ու գործաւորներուն որոնք գրաւուեցան սնամէջ և ուսուցիկ ճամարտակութիւններէ: Որչափ հակամէտ ալ ըլլանք անոնց վիճակին կարեկցելու, չենք կրնար սակայն ծածկել որ, եթէ ինչ որ անկարելի է, այդ տեսակ գործեակերպեր հող գտնէին Պուլկարիոյ մէջ, այդ պիտի նշանակէր անիշխանականութիւն ու վերջ իշխանապետութեան անկախութեանը: Պատահարներ որ կատարեալ մարդու մը վաղանցիկ անհանգստութիւն մը միայն կը պատճառեն, կրնան մահաբեր ըլլալ դեռահասակներու:

Բարեբաղդաբար Պուլկարիոյ համար կառավարութիւնը արթուն գտնուեցաւ և գիտցաւ իր պարտականութիւնը գործադուլի Գործադուլը հրատարակուելուն պէս, ամէն միջոցներ ձեռք առնուեցան կառախումբերու շրջապայութիւնը ապահովելու համար: Երկաթուղիներու զօրախումբը, բաղկացած մեծ մասամբ գործադուլ ընող պաշտօններէն ու գործաւորներէն շարժուն վիճակի մէջ դրուեցաւ և այգ խեղճ շրմոքեալները, զինուորական լոգիկով ու զինուորի օրականով կը կատարեն այժմ այն պաշտօնը, զոր մերժած էին կատարել: Պուլկարիական կառավարութիւնը, այս պարագային մէջ, ներշնչուեցաւ այն զինուորական միջոցներէն զոր գործադրած են հա-

մանման առթիւ գլխաւոր Տէրութիւնները, մասնաւորաբար Պրանսան, Իտալիան եւ Հունգարիան, այս վերջին տարիներուն մէջ :

Ուրեմն պարտինք ջերմապէս չնորհաւորել Պուլկարական կառավարութիւնը որ պարագաներուն համապատասխան գիրք մը բռնեց եւ ամենակարգի միջոցներ ձեռք առաւ խնայելու համար երկրին ծանր անպատեհութիւններ ու վնասի մեծ գումար հատուցումներ զոր անշուշտ պիտի պահանջէին օտար ընկերութիւնները, վաճառականներն ու ճարտարարուեստի տէրերը, բացի այն վնասէն որ պիտի կրէր այս երկրին վաճառականութիւնը ու ճարտարարուեստը :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Թիֆլիս, 1 Դեկտ.

Կարծեմ արդէն հասած կը լինի այն լուրը որ մի կարգ սրիկաներ մի բարձրաստիճան արքեպիսկոպոսի Սուքիաս Պարզեանին ձեռքի, թքի, մրել են. ես այդ մասին երկու խօսք եմ կամում ասել և իմացում տալ լուրջ մտածող հայերին :

1903 թուականն էր, ես Թիֆլիս էի. Հեռագիրը գուժեց ազգայնաբան Մելիքեանի արքեպիսկոպոսի մահը, այն ժամանակը որ Պլէվէ-Գոլիցիներն՝ կառավարութիւնը կամենում էր մեր եկեղեցական կալուածները խլել, Գաւառներում սկսել էր բողոքի ձայները, ցոյցերը, իսկ Թիֆլիսը որ հայութեան կեդրոնն է լուռ էր ոչ մի բողոքի ձայն ժպտուն չկար. Ահա հէնց այդ ժամանակն էր, օգոստոսի 3ին, երեւանում Սուքիաս արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ ամբողջ երեւանի հայերը գնում են Ս. Էջմիածին բողոքելու այն կաթողիկոսին որը մինչեւ կաթողիկոսանալը աշխարհ էր գլորդացնում, և այն օրն է լինում, որը հանդուցեալ Մելիքեանի արքեպիսկոպոսի հոգեհան-

գիստն էին կատարել. Ահա այդ ժամանակն էր որ Թիֆլիսում մեծ իրարանցումն ձգեց «Նոր-Դար»ի խմբագիր Պ. Սպանդար Սպանդարեանը Մելիքեանի արքեպիսկոպոսի հոգեհանգստի ժամանակը ճառ խօսեց, խրախուսեց հայերին և առաջին ցոյց տուց. այնուհետեւ առաջնորդարանում, երկաթուղու կայարանում Պ. Սպանդարը ժողովրդի առաջ ճառեր էր խօսում, բողոքում էր չտալ եկեղեցական կալուածները, երկրորդ ցոյցի ժամանակը ես ճողպարեցի երեւան, որովհետեւ ինձ կամենում էին ձերբակալել իսկ Պ. Սպանդարեանցին մի քանի ժամանակից յետոյ բանտ են տանում և այնուհետեւ արքայի միջնորդութեան կողմից գնալ Ս. Էջմիածին մնալ մինչեւ կալուածների գրաւուելու վերջը. Մնում եմ այդտեղ և թէ ինչեր եմ տեսնում, այդ յետոյ կը գրեմ Սեպտեմբերին էր, որ երեւանի Սուքիաս արքեպիսկոպոսի կաթողիկոսին մնաք բարեաւ ասելու. Վերանայի սկսած մինչեւ Գոյասն էի վանքը երկսեռ բազմութիւն էր կանգնած հանդերձ Հնչակեան և Դաշնակցականներով գլխաւորաբար Բարեաւ էին ասում Սուքիաս Արքեպիսկոպոսին որ արքայ էր գնում. Կարխան կայարանում իբրեւ Հնչակեան ինձ վիճակեց Սուքիաս արքեպիսկոպոսին առաջ մի քանի խօսք ասել, գրուատել, որ երկրորդ անգամ արքայ է գնում. Նա իմ ճառին պատասխանելով ասաց. «Մենք այս սքեմը հագել ենք օգուտ ազգի և եկեղեցու համար. է՛հ, օղուլ մեր աղօթողներին վառօդը թաց է չի բռնկում, էլի մեր յոյսը ձեզ նման երիտասարդների վրայ է. Այս խօսքերի վրայ, կեցցէնքերի տարափ էր որ տեղում էր, արտասուք էր որ թափւում էր հանդերձ Հըն

չակեան և Դաշնակցական չէֆերով, որ մի հայրենասէր արքեպիսկոպոս արքայ էր գնում. իսկ այսօր նրան դաւաճան, մատնիչ անուանելով թքում, մրում, ծեծում են ի խաչ հան կոչելով :

Այս մասին մանրամասն յետոյ. ԼՈՒՍՆԹՐԱԳ

ՎՈՐԱՅԻ ԱԶԳ. ՎԱՐՓԱՐԱՆԸ

Հակառակ որ Վառժայի մէջ երկու թերթեր կը հրատարակուին, այս տարուան կարճ ժամանակամիջոցի մէջ մի քանի անհատներ տեղւոյս Ազգ. վարժարանին համար ըրած անստորագիր քննադատութիւնները «Ռադիկալ»ին ուղարկելու ձանձրոյթն ունեցած են : Իսկապէս չարժեք որոշ նպատակներով հրատարակուած այդ ծիծաղելի գրութիւններուն պատասխանել, բայց ինչ ինչ թիւրիմացութիւններ պարզուելու նկատուածով հարկ համարեցինք մի քանի տող գրել :

Ինչպէս որ Վառժայի մէջ կարգ կանոն չկայ. վարժարանին հետ մօտէն ծանօթութիւն ունեցողները կրնան ուրանալ թէ կարգապահութեան համար ամէն կարելի միջոց կը գործադրուի, թէ չկայ վարժարան մը Վառժայի մէջ ուր հսկողութեան ու կարգապահութեան այնչափ մասնաւոր խնամք ու հոգածութիւն տարուի որչափ Ազգ. վարժարանին մէջ : Ո՞վ կոյր իմաստակներ ինչո՞ւ. հեռուէն սխալ տրուած պատկերները տակ վճիռներ կարծակէք կրթական դժուար գործի վրայ, անգամ մը ուսումնասիրեցէք այն գործը, որուն վրայ ձեր քառակուսի գլուխներով ճառելու հաւակնութիւնն ունիք : Երբ մէկը յիշափութեան հասցէին արդարացի դիտողութիւններ կընէ, ամէն կողմէն կը պոռաք թէ յիշափութեան չէ, ձեռնհաս չէ. բայց

լաւ գիտցէք, այսպիսի մէկը որ յանդգնութիւնն ունեցած է ճշմարտութիւններ յայտնելու, աւելի ձեռնհաս է քան այն մարդը՝ որ անխղճաբար վարժարանը կը քարկոծէ դրդուած անձնական ստոր կամ այլ դրուելի շահերէ, ու այսպիսի մէկը կը նմանի այն փողոցային ստահակին, որը գողութեան կամ այլ չարութեան համար ապտակ մը կերած է ու իր ոխը առնելու համար կը կոտորէ եկեղեցիին ապակիները, որուն մէջ պատահմամբ կը գտնուի ապտակահարը :

«Վարժարանին մէջ բռնութիւնը կը գործէ. ինչ անհասկանալի բռնութեան ոյժ է այս, որ մինչեւ անգամ կազդէ շուկայէն անցնող, խտնութիւն մէջ աշխատող մարդուն վրայ : Ո՞վ հրաշալի բռնութիւն, ո՞րք ես արդեօք : Դրուած ու ընդունուած կանոնները յարգել տալը, պարտաճանաչութեան կոչելը, վարժարանին յառաջացման արգելք եղող խոչնդոտները վերցնելու աշխատիքը բռնութիւնն չէ : Մեր կարծիքով միակի ճամբան այս է պահանջուած արդիւնքը ձեռք բերելու կրթական գործին մէջ : Անխնայութիւնը կը տիրէ այն ժամանակ երբ ամէն մարդ իր կամքին թելադրածին պէս կը գործէ վարժարանին մէջ, երբ ուսուցիչն ու ուսուցչուհին ուղղած պարբերին կը խաղան վարժարանին մէջ (մի ստիպէք մեզ օրինակներ բերելու) երբ անձնուէր ու եռանդոտ հսկող մը չկայ ամբողջ գործին վրայ երբ... (չարուանկեմք երբեք) : Ինչ տարօրինակ մարդիկ կան մեր մէջ, բուն, գործուած բռնութիւնները կը մոռնան ու կը փնտռեն բռնութիւնը հոն, ուր չկայ. օր մըն ալ աս գրիչնիդ կովկասի մէջ գործուած մեծ բռնութիւններուն վրայ բան մը, տող մը գրելու յարգանքիւնը ունենար. բայց դուք այդ չէք ընենք, դաւաճան չի կոչուելու համար. դուք ձեր ոյժը վարժարաններու վրայ կը փորձէք, հաստատ գիտնալով որ այն տաշտպան գիտնորներն չունին :

Ուսումն չկայ. մարդ որչափ անզգայ եղած պիտի լինի, որ անգամ մը առանց վարժարան այցելած լինելու (թէ եւ մէկ անգամէն ամեն բան չտեսնուիր) մեծ մեծ պատգամներ տեղայ ուսումն չկայ հասցնելով. Ուսումն ըսելով հայրենի վիճակը կը հակնադրուի քաղաքային բերաններ ու դուք անխիղճ շառլաթաններ : Ո՞րն է այն վարժարանը, ուր ամէն բան կատարելութեան մէջ է. ամէն ուսուցիչ իր դերին մէջ է :

Ա. ԵՐԵՎԱՆԵԱՆ

41

ԱՌԱՋԱԿԱՊԵՏՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

(Շար. նախորդ թիւէն)

ՀԱՐԵՄԻՆ ՄԵՋ

- Ի՞նչ է բաղձանքդ աղջիկս :
- Ի՞մա, գոչեց նուրիմէ :
- Այո՞ :
- Ես բաղձանք մը չունիմ... մեռած է իմ սիրտս :
- Ճշմարիտը խօսէ, մի ծածկեր :
- Ես ճշմարիտը կը խօսիմ : Ո՞հ, բարի ձաքեր, ալ ինչ բանի բաղձանք կուզէք որ ունենամ, երբ անակ մէկու մը ապարանքին մէջ կը գտնուիմ որ հօրս մարմինը չունենուի :

հանդէպ բռնաբարեց զիս : Ըսէք ինձի կրնամ ապրիլ Լոս... :

— Երեւոյն է, ատ պատմութիւնդ, առարկեց Պուլատ պէյ, բարկանալով :

— Երեւոյն չէ, Պուլատ պէյ, հաւատացէք որ ճշմարտութիւնն է կը յայտնեմ, վրայ բերաւ նուրիմէ :

Աւազակապետը ծերունի Պուլատ պէյին երեսը նայեցաւ ու նշանացի ձեւով մը հասկցուր թէ կուզէր մեկ նիւ : Ներքինին, ասոնց խօսք մընելու առաջնորդեց ֆաքերը մինչեւ դահլիճի դուռը :

— Մտիկ ըրէ՛ք, Պուլատ պէյ, ըսաւ Աւազակապետը. կէտք չկայ մանկամարդ աղջկան իղձին վրայ այնքան ծանրանալու... Կը տեսնեմ որ յուսահատութեանն՝ ամեն բան ընելու պատրաստ է : Աստուած հեռու ընէ... կըրնայ ըլլալ որ չունան մ'անցունէ վիզն ու խղճուի... Անոնք ըլլալիք բաներ են... Ան աստեան անոր արիւնը մտած կըլլաք : Աւելի աղէկ է անուշութեամբ անոր սրտին է՛ն մօտիկ զգացումն ե. բեւան բերել ու խօսիլ այնպէ՛ս, ինչ պէս օր իր հօգին կուզէ : Արդարեւ,

չատ իրաւունք ունէին ըսելու թէ աս աղջիկը տարօրինակ մէկն է : Ես ալ կը հաստատեմ թէ կրնարու մէջ ասանկ կամքի տէր, ասանկ անզգուելի արարած մը, մէկ խօսքով՝ ասանկ չքնաղ էակ մը չը գտնուիր : Կինը երջանկութեան խաբուսիկ ստուերն է, ասիկա ճշմարիտ է. բայց կը գտնուին եղբի կիներ ալ, որոնք ճառագայթ մըն են ոյգ ստուերին մէջ : Նուրիմէն այդ կարգի արարած մընէ. հետեւաբար անոր հոգեկան՝ զրութեւնը յեղիւղուկ չէ :

— Ինչ ընելու է... չեմ գիտեր որ... ընդհատեց Պուլատ պէյ նեղացած եղանակով մը :

— Դիւրին է. վաղը կո. գամ եւ ձեռքի կը յանձնեմ նուսխա մը. Դուք կաւաց մը քնացած աստեան անոր կուրծքին վրայ կը գնէք ու կը հեռանաք : Նուսխային զօրաւոր թըլըսմը բաւական է անոր կեանքին մէջ փոփոխութիւն մըտցունելու... այնպէս որ առջի նուրիմէն չը մնար, Մինակ թէ ձեռքէ գաւ մէկը թո՛ղ չիմանայ :

— Իմաստ լաւ. ըրէ՛ք ասանկ բարիք

մը. ան աստեան պարտականութիւնս ըլլայ փոխարէնը հատուցանելու :

Աւազակապետը մեկնեցաւ :

Երեւոյնի Պուլատ պէյ իր սենեակը քաշուելով սկսաւ խորունկ խորունկ մտածել :

Ամբողջ օրը գրէթէ անհանգիստ անցուց : Իրիկուան դէմ հարմանոցին միջանցքը մտաւ ու սենեկի մը գուռը բացաւ. Հոն, այդ սենեկին մէջ, միջահասակ սեւ սաթի գոյն առած ծամերով, խոշոր ու վառվառն աղբերով, ձուածեւ այտերով, խապչիկի յատուկ գիմագծերով ու գրաւիչ արտայայտութեամբ աղջիկ մը նստած էր ու նարկիլէ կը ծխէր :

— Օ՛, Մէլիմէ՛, անուշ ըլլա՛, աս ինչ հաճոյք է կը վայելես միս-միսակ բացաղանջն Պուլատ պէյ՛, իր ամխառնիկ դէմքին վրայ ժպիտ մը արտայայտելով :

— Հոգիս նարկիլէ մ'ուզեց, Պուլատ պէյ՛, միմիջեց մանկամարդ աղջիկը լիբը ու խնէ՛ջ ծիծաղով մը աղէկ չըրէ՛... վնաս է ծխել :

— Ամենեւեմ... աւելի աղէկ է, ու

ո՞րն է այն գործը որ պակասութիւններ չունի։ Անցեալ տարի հայերէնը լաւ ձեռքի մէջ լինելով լաւ արդիւնք տուաւ, ինչպէս այդ հասկցուեցաւ ամառվոյն քննութիւններէն։ այս տարի առ ի չգոյ՛ է ուսուցչի երեք դասարաններու հայերէնները յանձնուեցան օրերորդի մը, որուն վարժարան ընդունելութեան համար հոգարարձութենէն զատ ոչ ոք պատասխանատու է, օրերորդին հրաժարելովը երեք դասարանի հայերէնները առժամակէս բաց մնացին, այս պարագան չը նշանակիր թէ վարժարանին մէջ հայերէն չկայ քանի որ մնացած հինգ դասարանները հայերէն դասերը կը շարունակեն։ Ոչ թէ վարժարանին մէջ հայերէն չկայ հապա ինչպէս կերեւի, մեր եռանդոտ յոգուածագրին պտուկին մէջն է որ խելք չկայ իրողութիւնները տեսնելու ու դասեցնելու այնպէս ինչպէս որ են։

Կըսուի թէ աշակերտները չեն կրնար անսխալ նամակ մը գրել իրարու։ չենք հասկնար թէ աշակերտ մը աշակերտի ի՞նչ նիւթի վրայ երկտող մը պիտի գրէ, թղթատարութիւն մըն ալ հաստատենք, կերեւի թէ այս ալ նոր մանկավարժութիւն մըն է։ Գուք ի՞նչ իրաւամբ կը պահանջէք որ աշակերտները անսխալ նամակ գրեն։ զուք կրնաք արտադրել նամակ մը, գրութիւն մը, որ սխալներէ զերծ լինի, ո՞վ գիտէ ձեր ճգճիմ յոգուածը խըմբագրութեան որչափ յոգնութիւն պատճառած կը լինի սխալներու սրբագրութեան համար, զուք կը մոռնաք թէ նախակիրթարան մըն է այս, թէ փոքրիկները չեն ելլեր ասկէ, Հազար անգամ ըսուած են այս խօսքերը, բայց որո՞ւ կրօնս, հասկցող չկայ, աւելի դիւրութեամբ ասեղը կրանիթին մէջ կարելի է կոխել քան թէ մտքերը՝ ինքնահաւան։ Թերուս գլուխներու մէջ։

Յետոյ այն ի՞նչ խնդիր է որ կր յաբուցանէք զգրքերու գործածութեան համար, ասոնք այնպիսի գիտողութիւններ են, որոնք գրավավաճառի մը կամ անոր շահակից մարդու բերին վայել են։ Ո՞ր դասագիրքերուն համար է եղած ակնարկութիւնները, եղած ընդօրինակութիւնները չափուած ձեւուած են, զուք չէք կրնար աւելի բըծախնդիր ըլլալ քան ուսուցչիները, որոնք փորձառութեամբ գիտեն թէ որն է պիտանին ու օգտակարը, զուք չէք կրնար ըմբռնել այն օգուտները

որոնք առաջ կուգան մի քանի դասերու ընդօրինակութենէն։ Դուք այս գիտողութիւնները ընելով ցոյց կուտաք թէ անընդունակ էք կրթական գործին վրայ քննադատութիւն ընելու թէ զուք հայերէնը կարգադրելու համար հրապարակ ելած էք։ Ո՞վ գիտէ ի՞նչ փոքր ցաւ ունիք։

ԿԱՂԱՆԴ

ԴԻՏ. ԽՄԲ. — Միեւնոյն ատեն հարկ է ըսել թէ այս տարի կարող ուսուցչիներու պակասը ակնհայտ է. իսկ երեք տարի առաջ անկանոնութեան եւ լրբութեանց տեսակէտով անմրցելի էր այդ վարժարանը։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի մէջ ոճրագործութիւնները աւելցած են կրկին։ Տիփլիսի մէջ Դեկտ. 18ին ժամը 7-50ին Գաւթի իմանովի Բօտինեանցը խանութը գոցելէ յետոյ երբ էր երկու քոյրերուն հետ տուն կը վերադառնար, իր տան մուտքին առջեւ չարագործէ մը յարձակում կրեց և վիրաւորուեցաւ դաշտին երկու հարուածներով։ Գոյրերուն աղմուկէն մօտ տան մը պատուհանէն սպայի մը ատրճանակ պարպելուն վրայ չարագործը փախած է։

— Պաթումի տաճկահայ գործաւորներուն մէջ Դեկտ. 15ին ընդհարում մը տեղի ունեցաւ ապրանք փոխադրելու չնչին պատճառաւ մը։ Այս կուռին մէջ ատրճանակներ ու մահակներ ալ դեր կատարած են. ծանրապէս վիրաւորուողներ եղած են։ Բարեաղաքար կարելի եղածէ կուռին առջեւ չուտով առնել, եթէ ոչ կուռողները բազմաթիւ ըլլալով կրնար խիստ ծանր կերպարանք ստանալ։

— Մէրվ քաղաքին մէջ ձերբակալուած էր Ասլանբէկ Մէլիք Դահնազարեանցը, որ զինուորական դաշտային դատարանի վրձ-

ուով Դեկտ. 15ին կախաղան հանուեցաւ։

— Տիփլիսի ընդհ. նահանգապետը հրամանագրով մը կը յայտարարէ. «Վերջին օրերս Տիփլիսի մէջ կրկին սաստկացան պաշտօնական և մասնաւոր անձանց ըսպանութիւններու դէպքեր, որով գործի հանգամանքէն կարելի է ենթադրել որ ատոնց շատերը կը կատարուին կուսակցական նպատակներու համար»։ Եւ կը սպառնայ թէ ձերբակալուած յանձաւորը ինչ կուսակցութենէ ալ ըլլայ անյապաղ պիտի յանձնուի պատերազմա-դաշտային դատարանին։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՐ

Ինչպէս հաղորդում է «Վէք» լրագիրը, մօտիկ ապագայում արտասահմանում կայանալու է հայ «Դաշնակցութիւն» ֆեդերացիայի 4րդ ընդհանուր համագումարը։ Այդ համագումարին ներկայ են լինելու կուսակցութեան կենտրոնական կոմիտէաների պատուիրակները Կովկասի, Թիւրքիայից, Ամերիկայից, Եգիպտոսից և Բօլգարիայից և մի-մի ներկայացուցիչ Ռուսաստանի և Արեւմտեան Եւրոպայի հայ ու սահմանութեան կողմից։ Համագումարում քննվելի կարգինալ հարցը համալուծ է այն թէ կուսակցութիւնը Կովկասում ի՞նչ գործունէութիւն է ունենալու։ Բանը նրանումն է, որ Կովկասի «Դաշնակցական» ինտելլիգենցիայի մեծամասնութիւնը այսպէս կոչվող «երիտասարդ գաշնակցականները», որ այդ կուսակցութեան ամենից ծայրայեղ և սօցիալիստիքական ծուծն են կազմում, պահանջում են, որ «Դաշնակցութիւն» կուսակցու-

թիւնը զբաղվէ սոսկ թիւրքահայկական հարցով, ինչպէս առաջ, և բոլորովին չը խառնվէ Կովկասեան գործին, իսկ Կովկասում, «երիտասարդ դաշնակցականներին» կարծիքով, անհրաժեշտ է հայերի մէջ ստեղծել մի նոր յեղափոխական սօցիալիստիքական կուսակցութիւն, որը աշխատելու է Ռուսաստանի մնացող գործող յեղափոխական կուսակցութիւնների հետ։ «Հին» դաշնակցականները, ընդհակառակը պնդում են, որ «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը պէտք է իր հին գործունէութիւնը շարունակէ ինչպէս Թիւրքիայում, այնպէս և Կովկասում, որով նրա Կովկասեան գործունէութիւնը պէտք է անկախ լինի Թիւրքիայում կատարվող գործունէութիւնից։ Այս հարցի առիթով նախատեսվում է, որ համագումարում թերեւս երկպառակութիւն ծագէ «հին» և «նոր» դաշնակցականների մէջ, որի հետեւանքը, ամենայն հաւանականութեամբ կը լինի այն, որ Կովկասում երեւան կը գայ մօտիկ ապագայում մի նոր հայկական սօցիալիստիքական կուսակցութիւն որ չառ մօտ կանգնած կը լինի սօցիալիստ-յեղափոխականների ծրագրին։

Ի միջի այլոց, համագումարը սբաղվելու է նաև կուսակցութեան անդամներից մի քանիսի անկանոն գործողութեանց քննութեամբ—կարգապահութեան և դրամական զեղծումների նկատմամբ։

Մշակ

ՏՊԱԳՐԻՉ Մ. ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

որ ժամանակէ մը ի վեր քաղաքս հեռացած էր, այս պահուս կրկին վառնա վերադարձած է եւ ըստ առաջնոյն կը շարունակէ իր սպագրական արհեստը։

բովհետեւ ժամանակ կանցունեն ու չեն նեղանար առանձնութենէն։

— Ի՞նչ ընեմ... սա կեանքի մը ջրդիկն քովը չեմ թողնիր որ... ոչ կը խօսի, ոչ ալ կուզէ ուրիշ մը խօսի իրեն հետ։ Խեղճ է. ի՞նչ է... Բնա՛ւ չախորժեցայ իրմէն... եւ կը զարմանամ Սէրֆինազին որ այնքա՛ն կապուած է ատանկ արեւը չը տեսնող մէկումը։

— Կեցե՛ս, Մերիմէ՛, ատանկ ըլլալու է։ Մի՛ վախար... փաշայի հաբուստութիւնը ուտելով չը մննար։ Կե՛ր, խմ՛, վայելէ՛... այս է աշխարհիս երջանկութիւնը։ Դուն ասորի մնալով ի՞նչ պիտի ըլլայիր եւ ո՞ւր պիտի տեսնէիր ատանկ կեանք մը։ Անանկ չէ՞։

— Հարկա՛ւ... արդէն ծնողք մը ունէի, որուն չապիքը տաք տարին անգամ չէր փոխուեր։

— Ան չէ՛, Մէլիմէ, ի՞նչպէս եղաւ որ փաշային ներկայացար։

— Փաշային թիկնապահ մը կար, Բէշատ պէյ անունով— ատիկա մեր աւանին մէջ չըլլալով ատեն տեսաւ զիս

ու սիրեց՝ Ես խօսք տուի իրեն հետ փախչիլ, իրիկուն մը աւանէն քառորդ մը հեռու գտնուած սնոր վրանը գացի։ Հազիւ թէ չարաթ մը անցաւ, փաշան եկաւ ու տեսնելուն պէս զիս իր վրանը տարաւ։

— Հիմակ թիկնապահին վրայ սէր չուէ՞րս։

— Ի՛նչ... Ես գիտէի թէ ատ թիկնապահը մեծ մէկն էր, բայց երբ տեսայ որ փաշային դէմը չուէի պէս կը թողար, ան ատեն աչքէս եկաւ ու սիրտըս փաշային տուի։ Ա՛խ, ի՞նչ ընեմ... Ես գիտեմ թէ ինչ զատ ո՛չ ոք անձնուէր է այս յարկին տակ... դարձեալ իմ պատիւս վար է... դարձեալ կեանքի մը աղջիկն է ամենէն աւելի սիրուածը։

— Չէ՛, կը սխալիս, Մէլիմէ՛, փաշան ամեն ատեն կըսէ թէ «Սա ասորի աղջիկը շատ աչքաւ մտած է... աղէկ նայեցէք զինքը»։

— Իրա՛ւ...։

— Իրաւ է... Ես սուտ չեմ խօսիր։

— Ատիկա աղէկ, ուրեմն պարապ

տեղ հոգ կընէի այդ մասին։

— Նուրիմէ գալէն ի վեր սենեակդ եկած չէ՞։

— Ամենեւին, քանի մը տեղում ես իր քովը գացի... ուզեցի ու մեր չըրջաւին մէջ մտնէ... ուզեցի որ հարեմանոցի մ'անուշութեանը վարժեցունեմ զինքը։ Սովայն զարմացայ, երբ տեսայ որ ըսածներս չէր լսեր ու դառն ժպիտով մը շարունակ կը հեգնէր զիս։ Ես աւելի համակրած եմ սա մի-նինիկ Զահրուդարին, որուն թէ խօսուածքը, թէ շարժումը եւ թէ մըտերմութիւնը կապուած է հոգիս։ Ափսո՛ս որ դեռ շատ պղտիկ է է. բան մը չը զգար։ Երբ անցին քանի մը տարի, հասակը լեցուի, աչքը բացուի ու սիրտիս մէջ սէրս, ան ատեն կը հաւատամ թէ ապրանքին տիրուհին ան է ու փաշան իր ամբողջ գործանքն անոր պիտի նուիրէ։ Ա՛խ, մուստ պէյ, անցեալ օր տեսայ որ նոր օգերը մեռցուցած էր ակնջը, աղամանակուտ ապառանջան մը անցուցած էր իր չուշանաթոյր բազուկներուն, թանկագին մատանիներով զարդարած էր իր մատ-

ներն ու հագած էր մետաքսայեռ հագուստ մը... Երբ հարցուցի թէ ինչու զարդարուած էր, պատասխանեց թէ՛ այդ գիշերը փաշային քովը պիտի երթար։ Խե՛ղճ աղջիկ... դեռ հաղիւ տասներկու տարեկան է։

— Ի՞նչ կըլլայ տաներկու տարեկան ըլլալով... դուն գեղեցկութեանը նայէ՛, վարդի կոկոնը շատ աւելի սիրուն է, քան թէ անոր բացուածը։

— Աղէ՛կ, բայց բան մը չըսեցար։

— Ինչպէ՞ս չըզգար... չէ՞ որ զարդարուած էր փաշային քովն երթալու համար... Եթէ իր սէրը թափանցած չէ պիտի բաղձար չպարուել։

— Ատիկա ապացոյց մը չէ. մանուկն անգամ սէր ունի դէպի զարդարանք։ Կարծեմ թէ՛ եկածէն ի վեր՝ առաջին անգամն էր որ փաշային քով կերթար, անանկ չէ՞։

— Այդպէս է. շատ չընեմ որ փաշային թիկնապահը Չէրքէզներու երկրէն բերաւ զինքը։

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻԻՐԻՍ

Սթանպոլ Գարաբէօյ քէօր-
րիւսիննէ զօաթ ասքերէրին
նիւմարիւնէ սէպէպ շու րմըշքի՝
մէմլէքէթլէրիննէ վէրկիի շախ-
սիի վէ հալլանաթ վէրկիլէրի
թահսիլ իչիւն հիւքիւմէթ անլէ-
րին ագրապալարընը բէք քը-
զըշտըրմագտա ըմըշ հիւքիւմէ-
թին թութուպը թէտպիրլէր-
տէն իլէրի կէլէն իշպու իսթի-
լալը սիյասի վէ տիբլումաթ տախ-
րէլէրիննէ լահաթսըղըզ հասըլ
իթմիշ կէօրիւնիւյօր:

— Մաստէն նիղամնամէի ճէ-
տիտի սուի իսթիմալ իտիտի-
կինտէն տօշայը ինկիլիզ էլիսի
եէնիտէն Պապի Ալիի բրօթէսթ
իթտի:

— Թիւրք հիւքիւմէթինին իտ-
տասը իւղէրիննէ, Եւնան հիւ-
քիւմէթի վատ իթտի քի՝ ըռմ
չէթալարըն թէշքիլինի վէ Մա-
քէթոնիայ կէլէլէրինի իւշ ալ
գատար մէնն իտէճէք. ֆագաթ
էկէր պու իւշ ալտան սօնրա
պուլկար չէթալարը Մաքէթոնիա-
տաքի ըռմալարը թէշքիլի իտէր-
լէր իսէ՝ Եւնանիստան Դուգթէ-
տիօ յալմալաճագ ըռմ չէթա-
լարըն հարէքեաթընը մէնն իթ-
մոկէ, տէմիշ տիօր:

— Սօն վագըթլարտա Սքիւպ
վիւլայէթիննէ սըրպ չէթալարը
բէք արթմագտա վէ իշլէմէքտէ
տիրլէր: Սըրպլարըն էքսէրի
պուլկարալար գարշը զասպ ու
հաքարէթ իթմէքտէ վէ թիւրք
ասքերէրին եանընտան սէրպէսթ
կէլէլէքտէ օլտըզլարը Սթանպոլ-
տան Սօֆիայա պիւտիլիլիօր:

— Մաքէթոնիա ժանտարմալա-
րը արթըրմագ թէքլիֆինի Պա-
պը Ալի գապուլ իթմէտիկի ի-
չիւն ինկիլիզ տէվլէթի կէօմ-
ըիւկէրէ 100տէ 3 զամմ օլըն-
մասընա թէքրար գարշը կէլիօ
իմիշ:

— Մաքէքոնիալը պուլկար վա-
թանքէրլէրանընտան վէ «Տա-
խիլի թէշքիլաթ» գօմիթէսինի
թանգիօ իտէն ըշիսթամիան կը-
րուէֆ պէշ քիշի պէրապէր Մա-
լէչէվօ ճիւլարընտա Բուսէնօլօ
քէօյէ եագըն թիւրք ասքերլէ-
րինտէն գաթլ օլունմուշ տէյօր-
լար իշպու մաթէմնագ հալմախ
ըէսմէն թաստիգ օլունմամըշ ի-
սէկէ Աօֆիատա ֆէնա թէէսիօ
հասըլ իթմիշ տիօր:

— Սուլթան Համիտին թախ-
թա վարիսլիք գախտէսինին տէ-
կիշիլմէսինէ գարշը չէտիտէն
բրօթէսթ իտէն ըէսալէլէր ըՍ-
թանպոլտա վէ տէնիզ քէնարը
օլան չէհիրլէրտէ տաղըմըշ օլ-
մաղլէ, հիւքիւմէթ անլէրի թօք-
լամագ վէ մէմալիքին իշէրլէ-
րինտէ տաղըտըմամագ իշիւն
ֆէվզէլատէ չալըշմագտա տըր:

— Անսալտօ ֆապրիդտընտան

եարըլան եէտի տտէտ թօրիաօ
վարօրլար Սթանպոլա կէլմիշ օ-
լուպ, եէնի պահիէ հաղըրր
Հասան Բամի բաշա անլէրի պէօ-
յիւկ պիւր ալալլէ գապուլ իթմիշ
տիօր:

— Մաքէթոնիա տա մաքէմէ-
լէրին թէշթիլի իչիւն էվրօքա-
նըն սիլիլ մէմուրլարը պիւր
լաեիհէ թէրթիպ իթմիշ տիօր-
լէր: Պու խուսուստա Լեստրիա վէ
Բուօիա է, չիլէրի տիկէր էլիլէր-
լէ միւլէքէրէտէն սօնրա Պապը
Ալիլէ միւլէթէր պիւր նօթա
վէրէճէքլէր իսէտէ Պապը Ալի
էվրօքալըրըն ալիլէ իշլէրի-
նէ գարշըմալարընա գարշը կէ-
լէճէք տէյօրլար:

SUMMERE

Շըմէնտըֆէրլէր ասքերլէր վա-
տիթասը իլէ իշլէմէկէ տէվամ ի-
տէյօր: Թաթիլի մէշլուլիլէթ ի-
տէն մէմուրլարըն պիւր գըսօը
ասքէր էլպիսէսի իլէ խըտմէթ
իտէյօր: Տախիլիլէ վէ ալիլէ նա-
ղըրլարըն չըգարտըզլարը սիւր-
քիւլէր իւղէն Սօպրանիէտէն գա-
պուլ օլընան ենի գանուլ մու-
ճէպիւնէ թաթիլի մէշլուլիլէթ
իտէն չըմէնտըֆէր մէմուրլարը
թահթը մուհաքէմէլէ ալընըյօր-
լար հէմ իշլէն վէ ալըգտան
տուր օլմատան մաստա ճէգա տա-
խիլ չէքմէք օնլարա բէք աղըր
օլմագ:

Բէվայէթէ կէօրէ մէմալիքի
էճնէպիլէտէ օլան սօսիալիսթ վէ
իշճի պիւրօլարըն գասալարըն-
տան իանէ կէլմէքտէ իմիշ Բէլա
նարտնեագ բարթիսի 60000 ֆր-
իանէ վերմէք իսթէմիշ իսէտէ,
բէտտ օլունմուշ մէմուրլար չէօյ-
լէ ճէվապ իթմիշլէր: «Բարա ի-
լէ պիլի բարթիսիլէ ալէաթ իթ-
մէք իսթէրսինիլ: պիլի պու սէ-
ֆալէթէ պըրագան սիլսինիլ:
զիւրա չըմէնտըֆէր մէմուրլարըն
մաալարընը սիլ էնտիրտիսիլ:
Սօֆիատա, Բուսնուքտա, Վար-
նատա վէ տիկէր պաղը չէհիր-
լէրտէ լիպէրալար վէ սօսիա-
լիսթլէր թարաֆընտան հիւքիւ-
մէթին վէ ըօլիսիանըն հարէքէ-
թինէ գարշը միթիլիլէր վէ նիւ-
մալիլլէր օլունտու իսէտէ՝ սիւ-
քիւնէթլէ խիթամ պուլտու:

Մաթպատա չալըլան իշճի-
լէրին տախի պու կիւնլէրտղ
թէրքի իշլալ իթմէլէրի իչիւն
քեաղըրլար տաղըմըշ տըր:
Սեբալիատա չըմէնտըֆէր մէ-
մուրլարը տախի պուրտաքի կի-
պի թէրքի մէշլուլիլէթ իտէր-
լէր իմիշ:

ԲՈՒՍԻԱ

Չար Կովկասիայա Վարանցով
Տաշքով եէրինէ ժէնէրալ Բուրօ-
բաթքինի թալին իտէճէք իմիշ:
Փագաթ պիւր հալմախսէ պիւ-
նան, Բուրօբաթքին մուհաթ-
պէյէ տալիւր եաղտըղը քիթապ-

տա ժէնէրալ Բալլպաա վէ կի-
բէնպէրկ ալէհինտէ պուլունմուշ
օլտըղընտան, էկէր Բուրօբաթ-
քին եաղտըզլարընը կէրի ալ-
մաղ իսէ՝ մէշքիւր ժէնէրալար-
տան տուէլլօյա տալէթ օլընա-
ճագ ըմըշ:

— Բէթրսպուրկ նաշարնիկի
քիլիսէտէն չըգարքէն պիւր մէճ-
հուլ առամտան ըէվօլլէր իլէ
գաթլ օլունտու:

— Էվլէլէրի Տումանըն գարարը
ինղրէ, մալիլէ նաղըրը պիւր մի-
լիոն ըռալլի աճլարա տաղըթ-
մագ էմր իթտի:

Բուսիանըն Սամարա, Գաղան
վէ սալիւր պաղը վիւլայէթլէրին-
տէ գըթլըզ զիտտէլէշմիշ էհա-
լի հիւքիւմէթ էօնիւնէ թօքլա-
նուպ «Եա՝ իշ» եա էքմէք» պա-
ղըմըշ:

ԱՃԵՄԻՍԱՆ

Թէհրան 8 յունվար
Շահըն աշլալը սըհհիլէսի
գօրգուլը տըր: զանն օլընիլօրքի
Շահ կիճէի կէլիլէմէլէճէք: Վիւ-
քէլա սէրալի թօքլանմըշ տըր:

— Շահըն վէ վէլիաճտըն իւ-
զալարընը համիլ օլան Գանուլը
էսասի մէճլիսի մէպուսանտը գա-
պուլ օլունտու նիհայէթի իշպու
գանուլ մուճէպիւնէ՝ 60 քիշի-
տէն իպարէթ պիւրտէ մէճլիսի
Ալան թէշքիլ օլընիլօր: Ալանըն
30ը հիւքիւմէթ վէ շահ թարա
ֆընտան նասպ վէ 30ը էհալի-
տէն ինթիսապ օլընաճագ տըր:
Տէվլէթին պիւտմէսի վէ իսլահաթ
ու ինչաաթը պու իքի մէճլիս-
լէրին միւնաօիպ կէօրմէլէրի իլէ
թէրթիպ օլընապիլէճէք:

ՉԻՆ

Բէքինան պա թէլէկրաֆ պիւ-
տիլիլօր:

«Անֆուի, Հօման, Շայնթուկ,
Բէնդ-Սու վիւլայէթլէրինտէ զըթ-
լըզ բէք չիտտէթլի օլտըղընտան
4,000,000 գատար ինսան աճլըզ-
տան էօլէճէք տէրէճիլէրէ կէլ-
միշլէր տիօր:

ՄԱՐՈՔ

Մարոք հիւքիւմէթի Ֆրանսա
վէ Սպանիա ասքերլէրին գարա-
յա չըգմալարընա վէ միւտախէ-
լէյէ մէյտան վէրմէմէք իչիւն Ա-
լըմանիանըն թէշլիքի իլէ թան-
ճէրէ ասքէր կէօնտէրմիշ տիօր:

Սուլթանըն կէօնտէրտիլի աս-
քէրլէր Չինաթտաքի Բէսուլըն
առամլարը իլէ մուհաթպէյէ պաշ-
լատըլար:

Չինաթ թօքա թութուլտու-
ղընտան Բէսուլ տաղլարա Գաշա-
ճագ կէօրիւնիլօր:

ՆԵՐԿԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ
ՌՈՒՍՉՈՒՔ

Ժամանակէ մը իվեր հաստատուած
այս ներկի գործարանը կը ներկէ ա-
մեն տեսակ եւ գոյնեղ գամպակեղէն
եւ քրքեղէն ապրանքներ: Հագուստ-
ներ ալ կը մաքրէ ու կը ներկէ յա-
ճախողին ու զօժ գոյնին յար ու նը-
մանը: Եւ մասնաւորապէս մանած
ներկելու համար բնթարձակ յանձնա-
րարութիւններ կը ստանձնէ: Նախա-
գինեղով Անգլիական ինտիկօ (չիլիտ)
յար եւ նմանը ըլլալու պայմանաւ:

Ինչպէս Ռուսիոյ Նոյնպէս
ալ Վանայի Ֆիլիպի եւ ուրիշ
տեղերու վաճառականներ թող հաճին
անգամ մը դիմել միջ եւ փորձով հաս-
տատել թէ անալոյլ եւ մաքուր գոյ-
ներով կը ներկենք եւ յանձնարարու-
թիւնները փութով կը գործողորենք:

Դիմել ալս հասցէին
Տ. Ղուկաս Օգանեսն
ուլիցա ֆապրիլցնա ճւ.14
ՌՈՒՍՉՈՒՔ

ԹԻԻԻՔՆԱՐՅԷ

Table with exchange rates for various currencies and goods, including gold, silver, and different types of oil.

ՊԱԳՍԼԻ

Table with prices for various goods, including different types of oil, sugar, and other commodities.

ՄՇԱԿ

Օրաթերթ քաղաքական, գրական
Բաժնեգրին՝ Եւրոպայի համար 30 ֆր-
Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաս-
տանի եւ Ռուսաստանի համար 10 րուպ-
լի տարեկան:
Հասցէ՝ Խրազդուրին «ՄՇԱԿ»-ի
Թիֆլիս Կովկաս)